«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ,
ոստիկանության գնդապետ
_____ Մ. Մուրադյան
_____ 2021 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի՝ Աննա Աշոտի Հակոբյանի՝ «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում.պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Հ. Սայադյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Աննա Աշոտի Հակոբյանի՝ «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում. պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Ատենախոսության արդիականությունը կասկած չի հարուցում: Դատական նախադեպի կիրառման շրջանակների ընդլայնումը ազգային իրավական համակարգում, իրավմամբ, կարող է նպաստել դատարանների գործունեության բարելավմանը, արդարադատության արդյունավետ իրականացմանը և դատական իշխանության հեղինակության աճի ապահովմանը: Բացի այդ աշխարհում իրավական գլոբալացման գործընթացներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու զարգացող հասարակական հարաբերություններին համահունչ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկա: Ընդ որում, բարձր դատական

ատյանների կողմից ներկայացված դիրքորոշումները հանդիսանում են իրավական կայունության և որոշակիության ապահովման երաշխիք՝ առանցքային դերակատարություն ունենալով իրավական համակարգի զարգացման գործում: Կարևորելով դատական նախադեպի, որպես իրավունքի աղբյուրի տեղն ու դերը իրավակարգավորումների կառուցակարգում, հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված ՀՀ օրենսդրության կատարելագործման և իրավական բացերի լրացման գործընթացի արդյունավետությանը վերաբերող հիմնախնդիրներին:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, վեց ենթագլուխ պարունակող երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը և խնդիրները, մեթոդաբանական, տեսական, նորմատիվ և փորձարարական հիմքերը, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ատենախոսության գիտատեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Դատական նախադեպի առաջացման և զարգացման պատմական ընթացքը» վերտառությամբ գլխում հեղինակը ներկայացրել է հին հռոմեական իրավունքի համակարգը և աղբյուրները, պրետուրայի կառուցվածքը, դատական գործունեության դատավարական կարգի առանձնահատկությունները, անդրադարձել է Անգլիայի իրավական համակարգում նախադեպային իրավունքի զարգացման ընթացքին, ինչպես նաև Անգլիայում նախադեպի դոկտրինի պարտադիրության սկզբունքի էությանը և նպատակին:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Նախադեպային իրավունքի նկարագիրը, էությունը և բնութագրական հատկանիշները» խորագիրը, լուսաբանված են դատական նախադեպի հասկացությունը, էությունը, բնութագրական հատկանիշները, տեղը, դերը, առանձնահատկությունները ու դասակարգման եղանակները տարբեր իրավական համակարգերում և իրավունքի աղբյուրների շարքում, ինչպես նաև դատական իրավաստեղծ գործունեության առանձնահատկությունները, դատական որոշումների կառուցվածքը և բնութագրական հատկանիշները ընդհանուր իրավունքի երկրներում:

«Նախադեպի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգում» խորագրով երրորդ գլխում հեղինակն իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով նախադեպային իրավունքի ձևավորման գործընթացում բարձրագույն դատական ատյանների որոշումների դերակատարությանը, նախադեպի արդիականությանը և կիրառման անհրաժեշտությանը, նախադեպային իրավունքի զարգացման ուղիներին, նաև դատական նախադեպի կիրառման նախադրյալներին ու առանձնահատկություններին:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Անհրաժեշտ է նշել, որ նախադեպային որոշումների կիրառման նախապատվության հիմքերի վերաբերյալ առաջարկող դրույթը, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Այն կարող է սուբյեկտիվ գնահատման և տարաբնույթ ընկալման հիմք հանդիսանալ դատավորի անկախ և անչառ գործելակերպի համատեքստում:

2. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող վեցերորդ դրույթը: Վերջինիս շրջանակներում Հեղինակը ուշադրություն է հրավիրում իրավակարգավորումների ոլորտում իրավունքի աղբյուրների տրանսֆորմացիոն կիրառման գործընթացին: Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի շրջանակներում որպես իրավունքի աղբյուրներ արդեն իսկ լայն կիրառում ունեն թե նորմատիվ իրավական ակտը, թե դատական նախադեպը: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մոտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Դատական պրակտիկայի նյութեր» բաժնում բացակայում են ներկայացված ակտերի պաշտոնական աղբյուրները և էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները: Գրականության ցանկի «Մասնագիտական գրականություն» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված դրանց էջերի ընդհանուր քանակի վերաբերյալ տվյալները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում. պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Աննա Աշոտի Հակոբյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01- «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Աննա Աշոտի Հակոբյանի՝ «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում. պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» խորագրով թեկնա-

ծուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2021 թ. նոյեմբերի 29 նիստում, արձանագրություն թիվ 9:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր
կատարող, ոստիկանության փոխգնդապետ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի
տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ,
ոստիկանության գնդապետ _____ Գ. Գ. Մալխասյան